

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

բանասիրական գիյր. թեկնածու, ՄՄ

ԱՍՈՐԱՏԱՌ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԳՐԷԻ,
ԱՎԵՏԱՐԱՆԻ ԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՈՒՐՁ

Փ դարի արաբ մատենագիր Բար Բահլուլի Բառգրբի ասորատառ
● հայերեն բնագրին Հ. Տաշյանն առաջին անգամ անդրադարձել է 1899 թ., երբ Լոնդոնի ասիական ընկերության թերթում տպագրվել է հայագետ Դ. Մարգուլիուսի «Ասորահայկական գավառաբարբառը» հոդվածը, որի աղբյուրը մեծ հետաքրքրություն է առաջացրել հայագետների շրջանում: «Այս աղբիւրն է ձեռագիր մը՝ ասորահայկական ըստ ամենայն մասանց, այսինքն՝ Բառգիրք մը ասորերէն - հայերէն, եւ այն՝ հայերէնն ալ ասորի տառերով գրուած: Քիչ ձեռագիր կայ որ ասոր պէս թուական եւ ուրիշ տեղեկութիւններ ունենայ առատօրէն: Ամէն տառի սկիզբը գրիչը գրչութեան տարին, ամիսն ու օրը կը նշանակէ, եւ ձեռագրին վերջը շարք մը յիշատակարաններ կը գրէ ասորերէն, արաբերէն եւ հայերէն: Գրչի անունն է Եփրեմ, որդի Յովհաննու՝ օրհնեալ Դղեկէն Վանայ կոչեցեալ Դայր Աբի Դալիբ, որ կոչի նաեւ գաւառ Գարգար՝ Կղաղիա կոչուած տեղը»¹, - գրում է Հ. Տաշյանը:

Ձեռագիրը պատկանել է Ռ. Հարրիսին, որն այն մեծահոգաբար տրամադրել է «Thesaurus Syriacus»-ի հրատարակիչներին՝ թույլատրելով տպագրել նաեւ ձեռագրի մասին բոլոր տեղեկությունները: Ձեռագրի գրչության վայրը Մար Աբիայ (Daira d'seblatha) - Սուրբ Մարի վանքն է Վերին Հայոց Միջագետքում, որտեղ ԺԵ. դ. ընդօրինակվել է Ավետարան²:

Բառգրբի բնագրի վրա աշխատանքը Եփրեմ գրիչը սկսել է 1658-ին՝ եղեսիացի կրոնավոր Ռաբբան Հաբիբի պատվերով: Իր համար ոչ դյուրին այդ գործը նա ավարտին է հասցրել 1660-ին՝ ձեռագրի վերջում թողնելով ասորերեն հիշատակարան (հայերեն եւ անգլերեն թարգմանությամբ

¹ Յ. Տաշեան, Ասորատառ հայերէն բառգիրք մը, ՀԱ, 1899, էջ 22:

² «Յուցակ ձեռագրաց», հ. Բ., էջ 124:

ու մեկնաբանություններով), որտեղ նա անկեղծորեն խոստովանում է, որ ինքը չի վարպետացել գրչություն մեջ եւ այդ պատճառով շատ սխալներ է թույլ տվել, իսկ թե ինչու է հենց իրեն պատվիրվել՝ այդ մասին ոչինչ չի նշում:

Այս բացառիկ ձեռագրի մասին խոսելիս Հ. Տաշյանը սկզբում ընդգծում է, որ միայն ասորատառ հայերեն գրչությունը բավական է այն արժեւորելու եւ ուսումնասիրության նյութ դարձնելու համար, մանավանդ որ Միջագետքում ասորատառ հայերեն կարդացողների պակաս այն ժամանակ չի եղել, իսկ վերջում իր խոսքն ավարտում է քննադատական շեշտադրումով. «Ձարմանալի կը մնայ միշտ այն պարագան, որ ԺԷ. դարում հայ մը ասորերէն տառերով հայերէն կը ճգնի գրել՝ այնչափ դժուարութեանց ալ բախելով եւ հայերէն հնչիւններն այնպէս թերի եւ անճիշդ փոխադրելով, փոխանակ բնիկ հայերէն տառերը գործածելու: Իրեն համար՝ Կերեւայ զուր աշխատած է Մեսրոպ հայ գրերը գտնելու»³: Նրա կարծիքին, անշուշտ, կարելի էր համաձայնել, եթե Բառգիրքը գրված լիներ հայ հոգեւորականի պատվերով, մինչդեռ պատվիրատուն, ինչպես նշեցինք, եղել է ասորի, որի խնդրանքով էլ Եփրեմ գրիչը հանձն է առել այդ դժվարին աշխատանքը:

Հ. Տաշյանի բնութագրմամբ՝ Բառգրքի տառադարձությունը, ոճը եւ ուղղագրությունը «բաւական խառնակ բան մըն է», որ առաջացել է հայերեն 38 տառերը ասորական 22 տառերով ներկայացնելու պատճառով, իսկ լեզուն «բոլորովին նոր ռամկօրէն մըն է», որը ցայտուն երեւում է հիշատակարանում. «Ես իմ ազիզ ախրրորաք ինչ արեւն հայէք ու կարդէք աս թուիսք մի մախդրէք (= մի մեղադրէք) գրողին որ ես գրագետ չիմ հպա գրագետնուն ուրաց կոխնիմ ու մասէք թէ խոլայա գրերը մենծ մարդիմ մնացեր հայրուր աշունուս լուսա պակսէր (= աչքիս լոյսը պակսէր է): Թանասուն եւ յօթ փարու փղայի որ գրեցի աս թուիսթու»⁴:

Նա խոստանում է ձեռագրին ավելի մանրամասն անդրադառնալ Դ. Մարգուլիուի աշխատությունը լույս տեսնելուց հետո, սակայն, ինչպես պարզվում է, նա չի հասցրել կատարել իր խոստումը: Ակնհայտ է, որ Հ. Տաշյանն առավելապես կարեւորել է տառադարձության խնդիրը, որը Դ. Մարգուլիուի հոգվածում ներկայացված է բաղաձայնների եւ ձայնավորների համար գործածված կետային նշանների զուգահեռ շարքով, որով եւ պարզ է դառնում, թե ինչ համակարգով է ասորական այբուբենն օգտա-

³ Յ. Տաշեան, նշվ. աշխ., էջ 23:

⁴ Անդ:

գործվել հայերեն հնչյուններն արտահայտելու համար: Ըստ ամենայնի՝ դա եղել է վաղօրոք մշակված գրային համակարգ, որը կիրառվել է հատկապես Հայոց Միջագետքում:

Մեզ համար քննություն է արժանի այն հարցը, թե հայերեն որ բարբառով է գրված Բառգիրքը, քանի որ դրա ստույգ պատասխանը չի տրվում ո՛չ Դ. Մարգոլիուլի, ո՛չ էլ Հ. Տաշյանի հոգեվածներում, իսկ Հ. Աճառյանը ենթադրում է, որ այն Միջագետքի հայերեն մի բարբառով է, որը չատ մոտ է Տիգրանակերտի բարբառին, քանի որ այնտեղ ակնառու է Ա հոգի գործածությունը՝ խունկ կու ծխա, կու վառա կրակա, կու թաղա եւ այլն: Դրան անդրադառնալուց առաջ նախ ծանոթանանք նշյալ ձեռագրի վերաբերյալ Դ. Մարգոլիուլի դիտարկումներին. «Ցավոք, Ինճիճյանը տեղեկություն չի տալիս այդ ձեռագրի մասին, իսկ մեզ հասանելի չէ այդպիսի մեկ այլ աշխատանք, ուստի հնարավոր չէ պարզել ո՛չ գրադարձության մեթոդը, ո՛չ էլ հայկական բարբառը, որով այն գրված է: Մեզ թվում է, որ ասորատառ հայերեն ձեռագրերը մինչ այժմ կա՛մ բոլորովին անհայտ են եղել Եվրոպայում կա՛մ էլ, բոլոր դեպքերում, գաղտնի են պահվել: Այդ կարծիքը ես հաստատում եմ այն փաստով, որ թեպետ վերջին տարիներին հրատարակվել է Հայալեզու առատ գրականություն, սակայն դրանցից ոչ մեկի հեղինակը որեւէ հիշատակություն չի արել դրանց մասին: Որոշ հեղինակներ նախնական հիմքերի վրա պնդել են, որ հայերը մինչեւ սեփական այբուբենն ստեղծելը, սեպագրից հետո գործածել են փյունիկյան այբուբենը: Դա նրանց հայտնի է եղել, հետեւաբար ես հավատում եմ, որ այս նյութը նորություն է, ամեն դեպքում, գրեթե այդպես է»⁵: Այստեղ հարկ է նշել, որ հայագետը նկատի ունի այդ ձեռագրերի վերաբերյալ Ղ. Ինճիճյանի հետեւյալ խոսքը. «Մինչեւ ցայժմ լսեմք ուրեք գտանիլ հայկական մատենից գրեալ ասորի տառիւք, յորոց զմին ինքնին տեսեալ վկայեաց մեզ Սիմոն Ասսեմանին, որ մի էր ի վարժապետացն ի Պետաւիոն»⁶:

Բառգրքի ասորերեն-արաբերեն խմբագրությունը, ըստ Դ. Մարգոլիուլի, ավելի վաղ է թարգմանվել հայերեն, հետեւաբար Եփրեմ գրիչն ասորատառ հայերեն ձեռագրի թարգմանիչը չէ: Իրապես այն Բար Ալիի, Բար Բահուլի եւ այլոց բառգրքերից քաղված բարդ բառերի ցանկ է, որտեղ արաբերենը փոխարինված է ասորատառ հայերենով: Զեռագրում հայերեն բառերի տարբեր ուղղագրությունը, ինչպես՝ աշուին-աշուին, կու

⁵ D. S. Margoliouth, The Syro-Armenian dialect, "Journal of the Royal Asiatic Society", 1898, էջ 839:

⁶ Ղ. Ինճիճեան, Հնայնություն, հ. Գ., Վենետիկ, 1835, էջ 71:

պակաս-կու պագաս, միսիրա-միսրով եւ այլն, նրան հանգեցրել են այն մտքին, որ գրիչն օգտվել է Բառգրքի հայերեն մի քանի ընդօրինակությունից: Ձեռագիրը բաղկացած է հիշատակարանից, «Դինա Իկոբին ախջիկինա» պատմությունից եւ Բառգրքից (երկայուն էջ): Դ. Մարգուլիուսի համոզմամբ՝ այն գրվել է Մալաթիայից Սամոսատ ընկած հատվածում ապրող հայերի եւ ասորիների համար. «Այս նմուշը մեզ համար մի նշանակալի հուշարձան է հայերեն մի բարբառի, որով խոսել են ԺԷ. կամ ավելի վաղ դարերում: Այդ հատկանիշները բնորոշ են լեհահայոց խոսվածքին, որը որպես գրական լեզու հայտնի չէ»⁷:

Ուշագրավ է, որ նա անդրադառնում է նաեւ ա որոշյալ հոգին՝ լուսա - լոյսը, մատնանշելով, որ ուսումնասիրողները տարբեր կերպ են մեկնաբանել դրա գործածությունը. հստակ պատասխան չի տրվել, թե ինչպես է ը հոգը ներմուծվել գրական հայերեն, սակայն ասորահայկական բարբառում ա-ն լիովին համապատասխանում է ը-ին: «Այս հոգի տարբեր ձեւերով գործածությունը կարող է որոշ դիտարկումների առիթ դառնալ»⁸, - շեշտում է հայագետը:

Ինչպես վերելում նշեցինք, Հ. Աճառյանը կարծում է, որ ձեռագիրը գրված է Տիգրանակերտի բարբառին շատ մոտ խոսվածքով: Արեւմտյան Հայաստանի Դիարբեքիի նահանգի հայախոս բնակչության այս խոսվածքի տարածման սահմաններն ամբողջապես չեն պարզվել՝ բարբառախոսների բացակայության պատճառով: Տիգրանակերտի բարբառի քերականական հատկանիշների մասին խոսելիս Հ. Աճառյանը նշում է, որ այնտեղ հատկապես նկատելի է աշխարհաբարի ը հոգը, որը է ձեւն է ստացել, ինչպես՝ փերունէ - բերանը, շունէ - շունը, փունէ - փունը եւ այլն, իսկ ա հոգին նա չի անդրադառնում՝ բարբառի համառոտ նկարագրության պատճառով⁹:

Տիգրանակերտի բարբառն առանձին ուսումնասիրության նյութ է դարձրել Ա. Հանեյանը՝ մատնանշելով, որ այն պատկանում է կը ճյուղին եւ գտնվում է արեւմտյան խմբակցության Մուշ-Տիգրանակերտ բարբառախմբում՝ իբրեւ անկախ միավոր, առանձին բարբառ: Նա առանձնացնում է երեք որոշիչ հոգ՝ ն, է, ա, որոնք ունեն գործածության հատուկ ձեւեր: Այսպես օրինակ՝ ա հոգի գործածությունը խիստ սահմանափակ է եւ զուգորդվում է միայն մի քանի դերանվանական հիմքերի հետ՝ ըստրա,

⁷ D. S. Margoliouth, նշվ. աշխ., էջ 842:

⁸ Անդ, էջ 848:

⁹ Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա-Նոր Նախիջևան, 1911, էջ 161:

ընտրա, իրանցա, ըստունցա, ընունցա: Քանի որ ա-ն իբրեւ հող ընդհանուր ձեւով գործածական է Եդեսիայի բարբառում, հետեւաբար նա կարծում է, որ այդ սահմանափակ կիրառությունը Տիգրանակերտի բարբառում պետք է համարել հարեւան բարբառների ազդեցություն արդյունք՝ բարբառային խառնուրդ¹⁰:

Ինչպես տեսնում ենք, ա որոշյալ հողը Տիգրանակերտի բարբառում գործածվում է միայն դերանունների հետ, իսկ Բառգրքում՝ գոյականների հետ. կրակա, լուսա, ծուխա, ախշիկինա, մորա, ախրապաքա եւ այլն: Վերջին օրինակը Եդեսիայի բարբառում եղբայր բառի հոգնակին է՝ ուղղական հոլովով, իսկ աղջիկ բառի եզակին ունի ախշին-ախշինա, մայրը՝ մարա-մորա ձևերը: Քերականական այդ հատկանիշը, փաստորեն, խիստ բնորոշ է Եդեսիայի բարբառին, որի հիմնական կենտրոնները եղել են Հյուսիսային Միջագետքը եւ Հյուսիսային Սիրիան, որտեղ, ինչպես հայտնի է, գոյություն է ունեցել երբեմնի Օսրոնի պետությունը, որի բնակչության գրեթե կեսը եղել են հայեր, իսկ մյուս կեսը՝ ասորիներ: Հ. Աճառյանը Եդեսիայի բարբառն ընդգրկում է Տիգրանակերտի բարբառախմբի, իսկ Ա. Ղարիբյանը՝ «հա» ճյուղի բարբառների մեջ, որոնց թվում են նաեւ Արամոյի եւ Քեսաբի բարբառները: «Հա» ճյուղի հայրենիքը նա համարում է Հյուսիսային Սիրիան եւ Միջագետքը¹¹: Բնավ պատահական չէ, որ ա որոշյալ հողն առկա է նաեւ Հյուսիսային Սիրիայի Արամո հայկական գյուղի բարբառում, որը հայ բարբառագիտության մեջ համարվում է գրաբարին ամենամոտ բարբառը, ավելին՝ այն պահպանել է հնդեվրոպական նախալեզվին բնորոշ որոշ տարրեր, ինչպես օրինակ՝ դուդ - հայր բառը: Ի դեպ, այս բարբառով պահպանվել են սակավաթիվ նմուշներ, որոնցից է տերունական աղոթքը. «Յա միր Դուդա իլ գուս յերգեյնքա, սատուի ըննու քու անանա...» (Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո...)¹²:

Ըստ Ա. Ղարիբյանի՝ Եդեսիայի բարբառը բաղաձայնական համակարգով նման է Տիգրանակերտի եւ Մալաթիայի բարբառներին, որով եւ հաստատվել է այն միտքը, թե այդ տարածքի բնակչության բարբառները պատկանել են նույն խմբին: Նրա համոզմամբ՝ այնտեղ գոյություն է ունեցել բարբառային առանձնահատկություններով օժտված խոսվածքների մի մեծ խումբ, որի ուսումնասիրությունը հետաքրքրական նորություն-

¹⁰ Ա. Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Երևան, 1978, էջ 79:

¹¹ Ա. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958, էջ 146:

¹² Տես ՀԱ, Նմոյշ մը Արամո գիւղին հայ լեզուէն, 1907, էջ 27:

ներ կարող է ի հայտ բերել, ինչպես ցույց է տվել Եղեսիայի եւ Մալաթիայի բարբառներին թեթեակի ծանոթանալը¹³:

Եղեսիայի բարբառի միջոցով, փաստորեն, պարզվել է հա եւ կը մասնիկներ ինքնիմաստությունը: Բայի ներկա ժամանակաձևը կազմվում է ա մասնիկով, ինչպես՝ քրիմ ա - գրում եմ, շարունակական ներկան՝ նաեւ կը - կու մասնիկով՝ գը քրիմ ա - ահա գրում եմ, գուքաւ ա - գալիս եմ եւ այլն: Դա բնորոշ է նաեւ Մալաթիայի բարբառին, իսկ Տիգրանակերտի բարբառում կու - ի դիմաց առկա է կի ձևը՝ կի լացընէ, կի խնդացնէ եւ այլն:

Այսպիսով, Բառգրքում ա որոշյալ հոգի գործածության ձևը, կու մասնիկը եւ բայի ներկա ժամանակաձևի կազմությունը (կու ծիաւ, կու վառաւ, կու թաղաւ) ցույց են տալիս, որ այն գրված է Եղեսիայի բարբառով:

1906-ին Հ. Տաշյանը հանդես է գալիս «Ասորատառ հայերէն արձանագրութիւն մը» հոդվածով, որտեղ փորձում է պարզել Արեւմտյան Հայաստանի Դիարբեքիր նահանգի Մարդինի եկեղեցու շինության վերաբերյալ ասորատառ հայերեն գրության հետ կապված հարցերը: Եկեղեցու շինության թվականը մագաղաթի վրա ասորատառ հայերեն գրել է Հովակիմ արք. Թագպազյանը՝ ընդօրինակելով քարից, որն, ինչպես ենթադրվում է, գրվել է եկեղեցու պատի մեջ՝ քրիստոնյաներին թշնամիներից պահպանելու համար. «Թուսական շինութեան եկեղեցոյն Մարտիրոս, Ասորի Կաթողիկոս Հայկական լեզուաւ, որ ընթերցեալ լինի այսպէս. «Շինեցաւ Կաթողիկոս Սուրբ Կեդրոնիկոս Զօրասարի յամի Կաթողիկոս 450»: Այս թուականը օրինակուեցաւ մագաղաթեայ թղթէն որ Դիւանը կը պահուի, որ օրինակեալ է քարէն, յամի Տեառն 1791»¹⁴:

Հ. Տաշյանին գլխավորապես զբաղեցնում է այն, որ ասորերեն տառերով է գրված նաեւ շինության թվականը: Նրա համոզմամբ՝ եթե դա քրիստոնեական թվական լիներ, ապա շատ մեծ հնություն կունենար ու կհամարվեր նախամեսրոպյան շրջանի գրչական ավանդույթի կարեւոր նմուշ, բայց քանի որ քարը գրվել է եկեղեցու պատի մեջ կամ անհետացել է, ուստի հնարավոր չէ վերջնական եզրահանգում անել: Ասորերեն տառերով գրված թվականը նշանակում է 450, սակայն նա ենթադրում է, որ եթե բովանդակ արձանագրությունը հայերեն է, ուրեմն թվերը նույնպես պետք է արտահայտված լինեն հայերեն տառերով: Այդ դեպքում ստացվում է «Յամի Տեառն ՆԾ (1001 Ք.հ.)», որով եկեղեցին, ավելի ստույգ՝ քարը, պատկանելի հնություն է ունենում, սակայն նա ընդունելի չի համարում

¹³ Ա. Ղարիբյան, նշվ. , էջ 147:

¹⁴ Յ. Տաշյան, Ասորատառ հայերէն արձանագրութիւն մը, ՀԱ, 1906, էջ 65:

նաեւ այդ թվականը. «Եթէ այլազգ չապացուցուի՝ կարծենք Թագապաղյան եպ. գրել տուած պիտի ըլլայ, երբ եկեղեցին Ս. Գէորգ անուանուեցաւ, ուստի 1707-1716 տարիներէն ըլլալու է»¹⁵ :

1914 թ. հայտնի է դառնում, որ Տիգրանակերտում պահվում է ասորաւ հայերեն Ավետարանը: «Մեր բարեկամներէն մին պատահամբ կը հանդիպի ասորի քահանայի՛մ, որու կարգածն՝ ինքը հայ լինելուն համար՝ կը հասկնար եւ սակայն չէր կրնար ասորերէն կարդալ, իսկ քահանան ալ փոխադարձաբար, կը կարդար առանց հասկնալու», «Արմենիա» թերթին հղում անելով գրում է «Բազմավեպը»՝ միաժամանակ հավելելով Ավետարանի գոյութիւնը հաստատող տեղեկութիւնը. «Ներկայովս կու գամ հաստատել, թէ անկորուստ մնացած է այն եւ կը խնդրեմ որ հրատարակել հաճիք յուրախութիւն գրողին եւ իմացողներուն»¹⁶: Սակայն Ավետարանը ոչ միայն չի հրատարակվում, այլ նաեւ անհայտ է մնում նրա հետագա ճակատագիրը, ենթադրվում է, որ ոչնչացվել է 1915-1916 թթ. քրիստոնյա ասորիներէ կոտորածներէ ժամանակ:

Վերոնշյալ ձեռագրերի եւ արձանագրութեան վերաբերյալ Հ. Աճառյանը մի կողմից պնդում է, որ դրանք չեն վկայում նախամեսրոպյան շրջանում ասորաւ հայերեն գրականութեան առկայութեան մասին, մյուս կողմից նշում է, որ դրա ապացույցը կարող էր լինել թեկուզ միայն Ավետարանի թարգմանութիւնը. «Եթե հայերը Ռ. դարում գրականութիւն ունեցած լինեին, ամենից առաջ պարտաւոր էին Ս. Գիրքը, գոնե միայն Ավետարանը թարգմանել եւ ոչ թե զանազան պատմական գործեր հեղինակել»¹⁷: Նա անդրադառնում է նաեւ ասորաւ հայերեն ձեռագրերի գոյութեան մասին Ղ. Ինճիճյանի հայտնած տեղեկութեանը՝ շեշտելով, որ դրանք ուրիշ բան չեն կարող լինել, քան ոչ շատ հետին ժամանակներում գրված ձեռագրեր՝ Միջագետքի հայերի ձեռքով, որոնց վրա ասորիները մեծ ազդեցութիւն են ունեցել¹⁸:

Անշուշտ, միայն Բառգիրքը եւ քարե արձանագրութիւնը չեն կարող վկայել ասորաւ հայերեն գրականութիւն ունենալու մասին, սակայն Տիգրանակերտի Ավետարանի գոյութիւնը, պետք է ասել, փոխում է հարցի էութիւնը, քանի որ այստեղ արդեն գործ ունենք գրչական ավանդույթի խոշոր եւ համոզիչ վկայութեան հետ: Յավովք, մեզ հայտնի չէ, թե որ

¹⁵ Անդ, էջ 67:

¹⁶ «Բազմավեպ», Վենետիկ, 1914, էջ 95:

¹⁷ Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 489:

¹⁸ Անդ, էջ 472:

դարում է ընդօրինակվել Տիգրանակերտի Ավետարանը. ով գիտե, գուցե նրա գաղափար օրինակը թարգմանվել է Դ. դարում:

Ամփոփելով ասորատառ Հայերեն Բառգրքի, Ավետարանի եւ արձանագրության վերաբերյալ տեղեկությունների քննությունը, կարող ենք փաստել, որ երեքն էլ գրվել են Հայոց Միջագետքում, որտեղ Հայերն ու ասորիները գործունեություն են ծավալել կողքկողքի՝ նույնիսկ ամենալարված փոխհարաբերությունների պայմաններում: Բառգիրքը եղեսիացի կրոնավորի պատվերով գրվել է Եղեսիայի բարբառով, քանի որ այն, ըստ ամենայնի, հասկանալի է եղել նաեւ ասորիներին: Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ աշխատանքը հանձնարարվել է այդ գործում ոչ հմուտ տարեց գրչին: Դա պարզորոշ ցույց է տալիս, որ Ժէ. դարում այդ գրչությունը տարածված չի եղել Հայոց Միջագետքում, եւ վարպետներ այլեւս չեն գտնվել: Դա ինքնին փաստում է, որ Տիգրանակերտի Ավետարանը չէր կարող գրվել ավելի հետին ժամանակներում, օրինակ՝ ԺԶ. դարում, երբ Հայոց Միջագետքում կրթությունն ու գիտությունը մեծ վերելք էին ապրում, այնտեղ գործում էր մեծահամբավ Պետրոս աթոռակից Կաթողիկոս Կարկառեցին, որի աշակերտները ճանաչված վանահայրեր, առաջնորդներ, գործիչներ էին:

Դ. Մարգուլիսովի կարծիքը ասորատառ Հայերեն ձեռագրերը գաղտնի պահելու մասին, կարելի է ասել, հեռու չէ ճշմարտությունից եւ թելադրում է գտնել այն հարցի պատասխանը, թե ում կողմից է դա արվել՝ հայերի, թե ասորիների: Եթե հայ հոգեւորականների՝ ապա նրանք երբեւէ չէին խոսի քարե արձանագրության մասին, հետեւաբար մնում է ենթադրել, որ նախամաշտոցյան շրջանում Միջագետքում ընդունված ասորատառ Հայերեն գրչական ավանդույթը մաշտոցյան այբուբենի ստեղծումից հետո աստիճանաբար դուրս է մղվել, իսկ ձեռագիր մատյանները հայտնվել են ասորիների ձեռքում ու գաղտնի պահվել: Տիգրանակերտի Ավետարանը վկայում է ինչպես այդ, այնպես էլ՝ 22 նշանագրերով հայերեն գրելու մշակված համակարգի մասին, որ հնուց ի վեր կիրառելի է եղել Հայոց Միջագետքում:

РЕЗЮМЕ

Существование сирийско-армянской письменности доказывают Словарь арабского автора X века Бар - Балула, Евангелия Тигранакерта и копия надписи церкви Мардина. Статья о Словаре написанная 1898 г. Д. Марголитом вызвала большой интерес среди арменоведов. Г. Ташян, исследуя проблемы связанные

с этой рукописью, в основном обратил внимание на транслитерацию. А вопрос на каком армянском диалекте составлен Словарь не получил окончательного ответа в статьях Д. Марголита и Г. Ташяна, а Г. Ачарян полагал, что этот диалект ближе диалекту Тигранакерта. По нашему наблюдению, эта рукопись написана на диалекте Эдессы, так как там очевиден определенный артикль *a* с использованием существительных и форм глагола настоящего времени. Рассматривая надпись церкви, Г. Ташян не признал, что она была составлена в 450 году, так как цифры также написаны сирийскими буквами, а камень, с которого была скопирована надпись, утерен. О существовании Евангелия Тигранакерта стало случайно известно в 1914 году, скоро после чего он исчез, вероятно, будучи уничтожен в 1915-1916 гг., во время резни сирийских христиан. Д. Марголит считает, что ничего не писалось о сирийско-армянских рукописях в течение многих лет, так как они сохранялись в тайне. Об этих рукописях и надписи можно сказать, что после создания армянского алфавита, сирийско-армянская письменность в Месопотамии вышла из употребления, а рукописи, как доказывает Евангелие Тигранакерта, перешли в руки сирийских священников и хранились в тайне.

SUMMARY

The Glossary by the Arab author Bar Bahlul of the 10th century, the Gospel of Tigranakert and the copy of the inscription of the church Mardin prove the existence of Syro-Armenian script. D. Margoliute had devoted an article to the Glossary in 1898 which aroused great interest among armenologists. H. Tashian examining the questions connected with the manuscript writing mainly focused on the issue of transliteration. Nevertheless the question of the Armenian dialect, in which the manuscript is written, has not definite answer in D. Margoliut's and H. Tashyan's articles. H. Acharyan assumes that it is written in a dialect very close to the one of Tigranakert. We consider that it is the dialect of Edessa, as there are specific grammatical features of this dialect as *a* definite article with the use of nouns and present tense form in verbal structures. Referring to the inscription, H. Tashian has not accepted that it was written in 450, because the date also in Syriac letters and the stone from which it was copied is missing. The existence of Tigranakert Gospel accidentally became known in 1914, but after a short time it disappeared. It is supposed to be destroyed in 1915-1916 during the massacres of Syrian Christians. D. Margoliut suggests that nothing has been written about the Syro-Armenian manuscripts for many years as they have been kept secret. The data stored about these manuscripts and inscription allow us to say that after the creation of the Armenian alphabet by Mesrop Mashtots the Syro-Armenian script in Armenian Mesopotamia was gradually put out of use and manuscripts, as the Gospel of Tigranakert proves, were kept secret by Syrian priests.

